Շուշան ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀՊՏՀ ասպիրանտ

2014 թ. ավարտել է ՀՊՏՀ-ն և ընդունվել ասպիրանտուրա: 2016 թ. աշխատանքի է անցել ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնում՝ սկզբում որպես կրտսեր հետազոտող, իսկ 2018 թ.-ից առայսօր՝ որպես փորձագետ: Հեղինակ և համահեղինակ է 9 գիտական աշխատանքների:

ORCID - https://orcid.org/0000-0001-7669-8626

ՀԱՅԱՍՏԱՆ-ՈՒԿՐԱԻՆԱ ԱՌԵՎՏՈՒՐԸ՝ ՌՈՒՍ-ՈՒԿՐԱԻՆԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

DOI: 10.52174/2579-2989_2022.2-90

Հիմնաբառեր. *Հայաստան, Ուկրաինա, արտահանում, ներմուծում*

Ռուս-ուկրաինական ճգնաժամն՝ ի դեմս Ուկրաինայում տեղի ունեցող ռազմական գործողությունների, ինչպես նաև Ռուսաստանի նկատմամբ կիրառվող պատժամիջոցների, խաթարել է համաշխարհային մատակարարումների շղթան: Ուկրաինան պարենային ապրանքների առաջատար մատակարարներից մեկն է համաշխարհային տնտեսության մեջ: Ապրանքների մատակարարումներն Ուկրաինայից դադարեցվել են արտադրության ընդհատման, նավահանգիստների փակման, թռիչքների չեղարկման պատճառով: Ուկրաինան ներմուծման գծով 6-րդ, արտահանման գծով 16-րդ ՀՀ խոշոր գործընկերն է: Հիմնականում ներմուծվում են պարենային ապրանքներ: Հոդվածում ուսումնասիրվել են Հայաստան-Ուկրաինա առևտրային կապերն ու ռուս-ուկրաինական հակամարտության հնարավոր ազդեցությունը:

Ռուս-ուկրաինական պատերազմն արդեն իսկ ցույց է տալիս իր բացասական տնտեսական հետևանքներն ամբողջ աշխարհում: Մասնավորապես՝ խզվել են Ուկրաինայի տնտեսական կապերն աշխարհի հետ, դադարեցվել է առևտրային հոսքերի զգալի մասը, ռազմական գործողությունների պատճառով փակվել են ուկրաինական նավահանգիստները, չեղարկվել թռիչքները: Բացի այդ, երկիրը սահմանափակել է մի շարք պարենային ապրանքների արտահանումը[1]: Ըստ էության, Ուկրաինայի հետ տնտեսական կապերն ամբողջ ծավալով

[1] Ուկրաինայից Հայաստանը չի կարողանա հավի միս ներկրել, (07/03/2022), https://www.panorama.am/am/news/2022/03/07/%D5%88%D6%82%D5%AF-%D6%80%D5%A1%D5%AB%D5%B6%D5%A1-%D5%80%D5%A1%D5%B5%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6/2650260

չեն վերականգնվի առնվազն մինչև պատերազմի ավարտը, հետևապես՝ կարևոր է հասկանալ այս երկրի դերը ՀՀ տնտեսության մեջ և պատերազմի հնարավոր ազդեցությունը երկկողմ տնտեսական կապերի վրա:

Ուկրաինայի դերը համաշխարհային առևտրում

Ուկրաինայի պետական վիճակագրական ծառայության[2] տվյալների համաձայն՝ 2021 թ. երկիրն արտահանել է 68.1, ներմուծել՝ 72,8 մլրդ ԱՄՆ դոլարի արտադրանք: Արտահանման հիմնական գործընկերներն են Չինաստանը, Լեհաստանը, Թուրքիան, Իտալիան և Ռուսաստանը: Ուկրաինայի արտահանման 20,5%-ը կազմել են սև մետաղներ, 18,1%-ը՝ հացահատիկ, 10,5%-ը՝ «հանքաքար, խարամ, մոխիր» ապրանքատեսակները: Արտահանման առումով, թեև ամենամեծ մասնաբաժինն ունեն սև մետաղները, սակայն Ուկրաինայի կենսական դերը համաշխարհային տնտեսության մեջ պարենային ապրանքների, մասնավորապես՝ հացահատիկի և արևածաղկի ձեթի մատակարարումն է: Ուկրաինան արևածաղկի ձեթի խոշորագույն, իսկ հացահատիկի երկրորդ խոշոր մատակարարն է աշխարհում (հացահատիկի արտահանման ծավալներով զիջում է միայն ԱՄՆ-ին[3]): Ուստի, մատակարարումների ընդհատումը, առաջին հերթին, սպառնալիք է համաշխարհային պարենային անվտանգությանը:

Առևտուրը Հայաստանի և Ուկրաինայի միջև

Ուկրաինան կարևոր դեր ունի ՀՀ տնտեսության համար հատկապես ներմուծման տեսանկյունից: 2021 թ. այս երկրին է բաժին ընկել ՀՀ ներմուծման 2,7%-ը, արտահանման՝ 0,9%-ը: Ներմուծումը կազմել է 143.1, արտահանումը՝ 25,6 մլն ԱՄՆ դոլար: Ուկրաինան ապրանքների ներմուծման գծով 6-րդ, արտահանման գծով 16-րդ ՀՀ խոշոր գործընկերն է: Վերջին տասը տարիների ընթացքում Ուկրաինայից ներմուծումը զգալիորեն կրճատվել է, իսկ արտահանումը՝ որոշակի աճ գրանցել:

Ուկրաինայից ներմուծվում են հիմնականում սննդամթերք, ծխախոտ և մետաղներ: Ամենամեծ մասնաբաժինն ունի «Ծխախոտ և սիգար» ապրանքախումբը: 2021 թ. ներմուծվել է 20,8 մլն ԱՄՆ դոլարի ծխախոտ, որն Ուկրաինայից ներմուծման 14,6%-ն է: Այստեղից ներկրվում են ծխախոտի համաշխարհային ճանաչում ունեցող արտադրատեսակներ: Հարկ է ընդգծել, որ Հայաստան ներմուծվող ծխախոտի 61,7%-ը ստացվում է Ուկրաինայից (գծապատկեր 2), հետևապես՝ մատակարարումների ընդհատումը թեև բացասական ազդեցություն կունենա ծխախոտի գնի վրա, սակայն, հաշվի առնելով այն

ԱՂՅՈՒՍԱԿ 1

Ուկրաինայից արտահանվող հիմնական ապրանքատեսակները, 2021 թ.

Ապրանքախումբ	Արտահանում, մլրդ ԱՄՆ դոլար	Մասնաբաժին, %
Սև մետաղներ	13,9	20.5
Հացահատիկ	12,3	18.1
Հանքաքար, խարամ և մոխիր	7,1	10.5
Կենդանական և բուսական ծագման յուղեր և ճարպեր, սննդային ճարպեր, մեղրամոմ	7.0	10.3
Էլեկտրական մեքենաներ և սարքավորումներ, ձայնագրող ապարատներ և դրանց մասեր	3,1	4.6
Ձիթատու սերմեր և պտուղներ, դեղաբույսեր և տեխնիկական բույսեր, ծղոտ	2,4	3.6
Միջուկային ռեակտորներ, կաթսաներ, սարքավորումներ և մեխանիկական մասեր	2,1	3.1
Փայտ և փայտից իրեր, փայտածուխ	2,0	2.9
Սննդարդյունաբերության մնացորդներ, պատրաստի անասնակեր	1,7	2.5
Այլ	16.2	23.8

[2] Ուկրաինայի պետական վիճակագրական ծառայություն, http://www.ukrstat.gov.ua/
[3] https://comtrade.un.org/data/



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

Ուկրաինայի հետ ՀՀ առևտուրը, 2012-2021 թթ., մլն ԱՄՆ դոլար

հանգամանքը, որ ՀՀ-ն ծխախոտ արտադրող և արտահանող երկիր է, կարող է խթանել տեղական արտադրանքի սպառումը: Հաջորդ կարևոր ապրանքնախումբը թռչամիսն է, որին բաժին է ընկնում Ուկրաինայից ներմուծման 12,1%-ը (17,3 մլն ԱՄՆ դոլար): Ուկրաինայի դերը ՀՀ թռչնամսի շուկայում մեծ է, քանի որ այստեղ սպառվող թռչնամսի միայն մոտ 30%-ն է տեղական արտադրանք[4], և առկա է զգալի կախվածություն արտաքին շուկաներից: Ուկրաինան թռչնամսի ներմուծման գծով ՀՀ խոշորագույն գործընկերն է, որին բաժին է ընկնում ներմուծվող թռչնամսի 39,2%-ը: Ուկրաինական թռչնամիսը մրցունակ է ՀՀ շուկայում, քանի որ համեմատաբար ավելի էժան է, բացի այդ, դրա ներմուծման նկատմամբ կիրառվում է զրոյական մաքսատուրք: ՀՀ ներմուծվող թռչնամսի նկատմամբ գործում է սակագնային քվոտա, որի շրջանակներում 2022 թ. կիրառվում է 25%, իսկ քվոտայից դուրս՝ 80% մաքսատուրքի դրույքաչափ: Ուկրաինայից (ազատ

ԱՂՅՈՒՍԱԿ 2

ՀՀ ներմուծումն Ուկրաինայից՝ ըստ ԱՏԳԱԱ 4-նիշ դասակարգման, 2022 թ.

ԱՏԳԱԱ 4-նիշ, կոդ	ԱՏԳԱԱ 4-նիշ դասակարգմամբ ապրանքախումբ, անվանում	Ներմուծում, մլն ԱՄՆ դոլար	Մասնաբաժինն Ուկրաինայից ներմուծման մեջ, %
2402	Ծխախոտ և սիգար	20,8	14.6
207	Ընտանի թռչունների միս և ենթամթերքներ՝ դասակարգված 0105 ապրանքային դիրքում	17,3	12.1
7208	Հարթ գլանվածք երկաթից, ածխածնային պողպատից >=600 մմ (տաք գլանված, չերեսպատված)	11,7	8.2
2304	Քունջութ և սոյայի յուղի մշակման այլ մնացորդներ	7,5	5.3
1806	Շոկոլադ (կակաո պարունակող)	5,7	4.0
402	Խտացրած կաթ և սերուցք, կաթի փոշի, շաքար կամ քաղցրացնող այլ նյութեր ավելացրած	4,2	3.0
1905	Հաց, խմորեղեն, հրուշակեղեն, թխվածք, վաֆլի և այլ հացաբուլկեղեն	3,9	2.7
2202	Հանքային ջուր և ըմպելիք (շաքարով)	3,5	2.4
1704	Հրուշակեղեն (կոնֆետ, սպիտակ շոկոլադ), մաստակ	3,1	2.2
3004	Դեղամիջոց՝ բաղկացած առանձին նյութերից	3,0	2.1

[4] Աջակցել թռչնամսի տեղական արտադրությանը. քննարկում ՄՊՀ-ում, (04/02/2022), https://www.1lurer.am/hy/2022/02/04/%D4%B1%D5%BB%D5%A1%D5%AF%D6%81%D5%A5%D5%AC-%D5%A9%D5%BC%D5%B9%D5%B6%D5%A1%D5%B4%D5%BD%D5%AB-%D5%BF%D5%A5%D5%B2%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%A1%D6%80%D5%BF%D5%A1%D5%A4%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6%D5%A8-%D6%84%D5%B6%D5%B6%D5%A1%D6%80%D5%AF%D5%B8%D6%82%D5%B4-%D5%84%D5%8A%D5%80-%D5%B8%D6%82%D5%B4/656169



ԳԾԱՊԱՏԿԵՐ 2

ՀՀ ներմուծման մեջ Ուկրաինայի մասնաբաժինն ըստ մի շարք ապրանքների, %

առևտրի համաձայնագիր) և ԵԱՏՄ երկրներից ներկրելիս ծագման երկրի հավաստագրի առկայության դեպքում գործում է 0% մաքսատուրքի դրույքաչափ: Թռչնամսի ներմուծման գծով ՀՀ երկրորդ խոշոր գործընկերը Ռուսաստանն է, երրորդը՝ Բրազիլիան, այնուհետև ԱՄՆ-ը: Կարելի է ենթադրել, որ ներքին պահանջարկը կբավարարվի Ռուսաստանից ներմուծման ավելացման հաշվին, ինչը կհանգեցնի թռչնամսի գնի բարձրացմանը: Հետևապես՝ ներկայիս իրավիճակը կառաջացնի թռչնամսի ներմուծման ինչպես գնային, այնպես էլ աշխարհագրական կառուցվածքի փոփոխություն:

Պարենային ապրանքներից ներմուծվում է նաև շոկոլադ (5,7 մլն ԱՄՆ դոլար), խտացրած կաթ և սերուցք (4.2 մլն ԱՄՆ դոլար), հացաբուլկեղեն (3.9 մլն ԱՄՆ դոլար), հանքային ջուր և ըմպելիք (3,5 մլն ԱՄՆ դոլար), հրուշակեղեն (3,1 մլն ԱՄՆ դոլար): Վերոնշյալ հինգ ապրանքախմբերի գծով Ուկրաինան Հայաստանի երկրորդ խոշոր գործընկերն է: Ուկրաինայից ներմուծվում է հանքային ջրի և շաքարով ըմպելիքի 23,9%-ը, խտացրած կաթի 22,3%-ը, հրուշակեղենի 22,2%-ը:

Երկաթե և պողպատե գլանվածքների ներմուծումը կազմել է 11,7 մլն ԱՄՆ դոլար, որը Ուկրաինայից ներմուծման 8,2%-ն է: Միաժամանակ, երկաթե և պողպատե գլանվածքների 68,3%-ը Հայաստանը ստացել է Ուկրաինայից: Մյուս կարևոր ապրանքախումբը «Քուսպ և սոյայի յուղի մշակման այլ մնացորդն» է, որի ներմուծման ծավալը կազմել է 7,5 մլն ԱՄՆ դոլար: Սոյայի քուսպը կենդանիների կերերի հումք է, որի 58,3%-ը ՀՀ-ն ներմուծել է Ուկրաինայից:

Ինչ վերաբերում է արտահանմանը, ապա այստեղ հիմնական մասը պատկանում է ոգելից խմիչքներին: 2021 թ. «Էթիլային սպիրտ՝ չբնափոխված, սպիրտի 80%-ից պակաս խտությամբ ըմպելիքներ», «Խմորման ենթարկված այլ ըմպելիք (խնձորի և տանձի գինի)», «Խաղողի գինի, շամպայն» ապրանքախմբերի ապրանքները կազմել են Ուկրաինա արտահանված ապրանքների 65%-ը: Միաժամանակ, հարկ է ընդգծել, որ վերոնշյալ երեք ապրանքախմբերի արտահանումը դեպի Ուկրաինա կազմում է նույն ապրանքների ՀՀ արտահանման 18,1%-ը: «Ծխախոտ և սիգար» ապրանքախմբի ապրանքները ոչ միայն ներմուծման, այլև արտահանման խոշորագույն հոդվածներից են: Ուկրաինա է արտահանվել 5 մլն ԱՄՆ դոլարի ծխախոտ, որը դեպի այս երկիր արտահանման 19,6 %-ն է: Սակայն, ՀՀ ծխախոտի արտահանման մեջ Ուկրաինայի բաժին մեծ չէ, ընդամենը՝ 2,1%: Ծխախոտի արտահանման գծով Ուկրաինան ՀՀ 6-րդ խոշոր առևտրային գործընկերն է: Մնացած ապրանքների արտահանման ծավալները չեն գերազանցում կես մլն ԱՄՆ դոլարը: Ուկրաինան կարևոր

ԱՂՅՈՒՍԱԿ 3

ՀՀ-ից արտահանումը դեպի Ուկրաինա՝ ըստ ԱՏԳԱԱ 4-նիշ դասակարգման, 2022 թ.

ԱՏԳԱԱ 4-նիշ, կոդ	Ապրանքախմբի անվանում	Արտահանում, մլն ԱՄՆ դոլար	Մասնաբաժինը դեպի Ուկրաինա արտահանման մեջ, %
2208	Էթիլային սպիրտ՝ չբնափոխված, սպիրտի 80%-ից պակաս խտությամբ ըմպելիքներ, լիկյորներ և ալկոհոլային այլ խմիչքներ	15,2	59.3
2402	Ծխախոտ և սիգար	5,0	19.6
2206	Խմորման ենթարկված այլ ըմպելիք (խնձորի և տանձի գինի)	0,8	3.0
2204	Խաղողի գինի, շամպայն	0,7	2.7
3004	Դեղամիջոց՝ բաղկացած առանձին նյութերից	0,5	1.8
8604	Տրանսպորտային միջոցներ՝ ինքնագնաց կամ ոչ ինքնագնաց	0,4	1.6
1806	Շոկոլադ (կակաո պարունակող)	0,3	1.2
2512	Ինֆուզորային սիլիկատային հող (լեռնալյուր)	0,3	1.1
2007	Ջեմ, մրգախյուս, մարմելադ (պտղից և հատապտղից)	0,3	1.0
2403	Ծխախոտի այլ պատրաստուկ և խտահյութ	0,2	0.8

շուկա է «Տրանսպորտային միջոցներ՝ ինքնագնաց կամ ոչ ինքնագնաց» ապրանքախմբի ապրանքների համար, քանի որ դրանց արտահանման միակ գործընկերն է, ինչպես նաև «Ինֆուզորային սիլիկատային հող (լեռնալյուր)» ապրանքախմբի ապրանքների դեպքում, որոնց արտահանման 23,6%-ն ուղղվում է դեպի Ուկրաինա:

Ամփոփելով նշենք, որ Ուկրաինան նշանակալի դեր ունի ՀՀ տնտեսության մեջ՝ ներմուծման առումով: Այստեղից ներմուծվում են ծխախոտ, թռչնամիս, ոչ ալկոհոլային ըմպելիքներ, հացաբուլկեղեն և հրուշակեղեն: Ռուս-ուկրաինական հակամարտության պատճառով, առաջին հերթին, տուժելու է ՀՀ թռչնամսի ներմուծման ոլորտը: Ուկրաինական թռչնամիսը համեմատաբար էժան է, հետևապես՝ այլընտրանքը կլինի ավելի թանկարժեք ներմուծումը, հիմնականում՝ Ռուսաստանից: Ծխախոտի ներմուծման ընդհատումը մի կողմից կարող է հանգեցնել գների բարձրացման, մյուս կողմից էլ՝ հնարավորություն ստեղծել տեղական արտադրանքով փոխարինման համար: Ուկրաինան արտահանման կարևոր շուկա է հայաստանյան ոգելից խմիչքների և ծխախոտի համար, ուստի, անհրաժեշտ է փնտրել իրացման այլընտրանքային շուկաներ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ուկրաինայի պետական վիճակագրական ծառայություն, http://www.ukrstat.gov.ua/
2. Ուկրաինայից Հայաստանը չի կարողանա հավի միս ներկրել, (07/03/2022), https://www.panorama.am/am/news/2022/03/07/%D5%88%D6%82%D5%AF%D6%80%D5%A1%D5%AB%D5%B6%D5%A1-%D5%80%D5%A1%D5%B5%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6/2650260
3. https://comtrade.un.org/data/
4. Աջակցել թռչնամսի տեղական արտադրությանը. քննարկում ՄՊՀ-ում, (04/02/2022), https://www.1lurer.am/hy/2022/02/04/%D4%B1%D5%BB%D5%A1%D5%AF%D6%81%D5%A5%D5%AC-%D5%A9%D5%BC%D5%B9%D5%B6%D5%A1%D5%B4%D5%BD%D5%AB-%D5%BF%D5%A5%D5%B2%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%A1%D6%80%D5%BF%D5%A1%D5%A4%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6%D5%A8-%D6%84%D5%B6%D5%B6%D5%A1%D6%80%D5%AF%D5%B8%D6%82%D5%B4-%D5%84%D5%8A%D5%80-%D5%B8%D6%82%D5%B4/656169

Шушан МОВСИСЯН
Эксперт исследовательского центра «Амберд», АГЭУ

АРМЯНО-УКРАИНСКАЯ ТОРГОВЛЯ В УСЛОВИЯХ РОССИЙСКО-УКРАИНСКОГО КОНФЛИКТА

Российско-украинский кризис - боевые действия в Украине, санкции против России нарушили глобальную цепочку поставок. Украина – одна из ведущих поставщиков продовольствия в мировую экономику. Поставки товаров из Украины остановлены в связи с остановкой производства и закрытием портов, отменой рейсов. Украина является 6-м крупнейшим партнером Армении по импорту и 16-м - по экспорту. В основном ввозятся продовольственные товары. В статье рассматриваются торговые отношения Армении и Украины и возможное влияние российско-украинского конфликта.

Ключевые слова: *Армения, Украина, экспорт, импорт*

Shushan MOVSISYAN
Expert at «Amberd» Research Center, ASUE

ARMENIA-UKRAINE BILATERAL TRADE RELATIONS IN THE CONTEXT OF RUSSIA-UKRAINE WAR

Russia-Ukraine crisis, military operations in Ukraine, sanctions on Russia have disrupted global supply chains. Ukraine is one of the leading suppliers of food products in the global economy. Product supply hit hard due to production disruption, closure of sea ports, as well as flight cancelations. Ukraine is the sixth largest import partner, and the sixteenth largest export partner of Armenia. The paper aims at studying Armenia-Ukraine trade relations and potential impact of Russian-Ukrainian tensions.

Keywords: *Armenia, Ukraine, export, import*